

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

00

19.01.2015թվականին ժանր 14 -ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Շենավան համայնքի ղեկավարի 2014թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության քննարկումը: Տարեկան հաշվետվության քննարկմանը մասնակցում էին գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի, բուժ-ամբուլատորիայի աշխատակիցներ ինչպես նաև համայնքի ակտիվ բնակիչներ, ընդամենը 41 մարդ:

2014թվականի տարեկան հաշվետվության քննարկմանը մասնակցում էր նաև Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արամ Հովհաննիսյանը:

Նախագահությամբ՝ Ա.Հովհաննիսյանի
Քարտուղարությամբ՝ Հ.Առաքելյանի

Համայնքի ղեկավար Ա. Մկրտչյանը հաշվետվության մասնակիցներին ներկայացրեց տեղեկատվություն այն մասին, որ 2014թվականի ձմռան ամիսներին համայնքում կատարվեցին գյուղատնտեսական աշխատանքներ: Քանի որ տարին սկսվել էր տաք եղանակներով համայնքում կատարվեցին այգեբացի, այգետի և պտղատու այգիների բուժման աշխատանքները: Սակայն Մարտի 29-ին և 30-ին տեղի ունեցավ ցրտահարություն, քամախառն ձյան և գիշերային ցրտի պատճառով ցրտահարվեց համայնքի 184.41հա պտղատու այգիները որոնք ծաղկել էին և խաղողի այն այգիները որոնք այգեբացից հետո սկսել էին կանաչել: ՀՀ կառավարության կողմից համայնքի պտղատու այգիների սեփականատերերին զիջվեց հողի հարկի գումարը ամբողջությամբ և ջրի վարձը 50%-ով: Գարնանը համայնք մատչելի գներով ներկրված ազոտական պարարտանյութի և դիզվառելիքի ինչպես նաև որպես օգնություն տրամադրված սերմերի շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել խաղողի այգիների բերքատվությունը և զարգացնել բանջարաբուծությունը:

2014թվականի համայնքի բյուջեն կատարվել է
Մուտքային մասը -- 25990.8 հազար դրամ
Պլան -- 34653.8 հազար դրամ
Կատարման %-ը -- 75%

Տարեսկզբի ազատ մնացորդ -- 9990.0 հազար դրամ
Ծախսային մասը պլան -- 44643.8 հազար դրամ
Փաստացի կատարված -- 32369.7 հազար դրամ

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է բնակչության խմելու ջրով ապահովումը ինչպես նաև աղբահանությունը: Գիշերային ժամերին ապահովվել է կենտրոնական փողոցի լուսավորությունը:

Վերանորոգվել է խմելու ջրի վթարված պոմպերը, ինչպես նաև կատարվել է վթարված խողովակների վերանորոգում:

Համայնքի համար հրատապ լուծում պահանջող խնդիրներն են

1. Համայնքի ամբողջությամբ գազաֆիկացումը
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգումը
3. Ակումբի վերանորոգումը
4. Հուշարձան այգու ցանքապատումը
5. Խմելու ջրագծերի վերանորոգումը

Համայնքի բնակչությունը ակնկալում է Արմավիրի մարզպետ Ա. Ղաիրամանյանի աջակցությունը վերը նշված հիմնախնդիրները լուծելու համար:

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

[Signature] Ա.Հովհաննիսյան
Հ.Առաքելյան

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

